



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ № 02Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով, 6-րդ, 11-րդ և 12-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի գործունեության կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովում ընտրությունների քվեաթերթիկների ձևերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի 19.02.2009թ. «Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 01Լ որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒՐՔԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

2018թ. մայիսի 18
ք.Երևան

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ Դատավորների ընդհանուր ժողովի

Ընդհանուր դրույթներ

1. Սույնով սահմանվում է դատավորների ինքնակառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի (**այսուհետ՝ Ժողով**) խնդիրների իրականացման նպատակով գործունեության կազմակերպման կարգը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (**այսուհետ՝ Դատական օրենսգիրք**) և այլ օրենքներով վերապահված լիազորություններն իրականացնելիս:

2. Ժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) քննարկում և Բարձրագույն դատական խորհուրդ և այլ իրավասու պետական մարմիններ է ներկայացնում դատարանների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ.

2) ձևավորում է Կարգապահական, Ոստմնական հարցերի հանձնաժողովներ և իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար՝ աշխատանքային խմբեր.

3) հաստատում է իր, հանձնաժողովների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև աշխատանքային խմբերի գործունեության կարգը.

4) ընտրում և առաջարկում է Սահմանադրական դատարանի դատավոր անդամների թեկնածությունները.

5) ընտրում է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին.

6) հաստատում է դատավորի պատմունձանի նկարագրությունը և տրամադրման կարգը.

7) սահմանում է դատավորի էթիկայի կանոնները.

8) քննարկում է դատարանների աշխատակազմերի տարեկան գործունեության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի հաղորդումը.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

3. Ժողովը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Դատական օրենսգրքին և սույն կարգին համապատասխան:

4. Ժողովը կազմված է Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորներից, որոնք ի պաշտոնե Ժողովի անդամներ են:

5. Ժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

6. Ժողովի գործունեության և նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի (**այսուհետ՝ Դեպարտամենտ**) կողմից:

7. Ժողովն ունի սահմանված ձևի կլոր կնիք: Կնիքի վրա պատկերվում է Հայաստանի Հանրապետության զինանշանը, որի շուրջը հայերեն լեզվով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ» բառերը:

Ժողով հրավիրելը

8. Ժողովը հրավիրում և վարում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը: Վերջինիս բացակայության դեպքում Ժողովը հրավիրում և վարում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող անձը:

9. Հերթական Ժողովը հրավիրվում է տարին մեկ անգամ: Արտահերթ Ժողով կարող է հրավիրվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահի կողմից՝

1) իր նախաձեռնությամբ.

2) դատավորների առնվազն 1/5-ի պահանջով.

3) Ժողովի հանձնաժողովի պահանջով:

10. Եթե Ժողովը հրավիրվում է սույն կարգի 9-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նշված հիմքերով, ապա Ժողովի օրը (ամիսը, ամսաթիվը) նշանակելու և Ժողովը կազմակերպելու համար գրավոր միջնորդություն է ներկայացվում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին: Նման միջնորդություն ստանալու դեպքում, ելնելով ներկայացված հարցի քննարկման հրատապությունից, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը ոչ ուշ, քան միջնորդությունը ներկայացնելու օրվան հաջորդող երեսուն օրվա ընթացքում, նշանակում է Ժողովի օրը (ամիսը, ամսաթիվը) և վայրը:

11. Ժողովը հրավիրվում է Երևան քաղաքում, եթե Ժողովն իր որոշմամբ Ժողով հրավիրելու այլ վայր չի սահմանում:

12. Ժողովը հրավիրվում է աշխատանքային օրերին և ժամերին: Բացառիկ դեպքերում, ելնելով հարցի հրատապությունից, Ժողով կարող է հրավիրվել ոչ աշխատանքային օրերին և ժամերին:

13. Ժողովն իրավագոր է, եթե դրան մասնակցում է դատավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

14. Ժողովը լուսաբանելու նպատակով Ժողովի որոշմամբ կարող են ներկա գտնվել նաև լրատվության միջոցների ներկայացուցիչներ՝ Ժողովի կողմից սահմանված կարգով:

15. Ժողովը սկսվում է օրակարգի նախագծի (այսուհետ՝ Օրակարգ) ներկայացմամբ, քննարկմամբ և հաստատմամբ:

Ժողովի նիստի Օրակարգը

16. Ժողովի նիստի Օրակարգում ընդգրկվում են Ժողովի նիստը նախաձեռնողի կողմից առաջարկվող հարցերը: Օրակարգը կազմում է Դեպարտամենտը, որում ներառվում են առաջարկվող հարցերը, զեկուցողի անունն ու ազգանունը:

17. Եթե Ժողովը հրավիրվել է սույն կարգի 9-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նշված հիմքերով, ապա նախաձեռնողի կողմից առաջարկվող հարցն Օրակարգի մեջ ընդգրկելու համար պետք է ներկայացվի՝

1) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին հասցեագրված առաջարկություն (միջնորդություն), որը նկարագրում է հարցի նախապատմությունը, սահմանում է բուն հարցը և շարադրում հարցի քննարկման անհրաժեշտության հիմնավորումը.

2) զեկուցողի անունն ու ազգանունը.

3) Ժողովում ներկայացվող հարցի վերաբերյալ որոշման նախագիծը.

4) առկայության դեպքում այլ փաստաթղթեր:

Ժողովի նիստերի վերաբերյալ ծանուցման գործընթացը

18. Ժողովի նիստի Օրակարգի, ժամանակի և վայրի մասին Ժողովի անդամներին պատշաճ ձևով ծանուցելու գործընթացն ապահովում է Դեպարտամենտը:

19. Ժողովի նիստի մասին ծանուցումը, Օրակարգը և դրանում ընդգրկված հարցերի կապակցությամբ Դեպարտամենտում առկա նյութերը, ինչպես նաև անհրաժեշտ այլ փաստաթղթերը, որպես կանոն, Ժողովի անդամներին ուղարկվում է նրանց կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով (այսուհետ՝ էլեկտրոնային եղանակով): Էլեկտրոնային եղանակով ծանուցելու անհնարինության դեպքում հիշյալ գործընթացն իրականացվում է պատվիրված նամակով՝ հանձման մասին ծանուցմամբ, կամ այլ այնպիսի եղանակով, որն ապահովի սահմանված ժամկետում դրանց ստացումը Ժողովի անդամների կողմից:

20. Ժողովի անդամները Ժողովի նիստի Օրակարգի, ժամանակի և վայրի մասին, որպես կանոն, ծանուցվում են նիստի օրվանից առնվազն 5 օր առաջ, իսկ Բարձրագույն դատական խորհրդի անդամների և Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրության դեպքում, որպես կանոն, առնվազն 10 օր առաջ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Միաժամանակ, դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է հայտարարություն՝ Ժողովի վայրի և ժամանակի մասին:

21. Ժողովի նիստին դատավորների մասնակցությունը պարտադիր է: Բացակայությունը թույլատրվում է միայն հարգելի պատճառով: Բացակայության պատճառների մասին դատավորը նախօրոք տեղեկացնում է Ժողովին՝ Դեպարտամենտի միջոցով:

Ժողովը վարողի լիազորությունները

22. Ժողովը վարողը՝

ա) վարում է Ժողովի նիստերը.

բ) հայտարարում է նիստի ընդմիջումները.

գ) ապահովում է օրակարգային հարցերի քննարկման հաջորդականությունը և յուրաքանչյուր հարցի քննարկումը սկսվելուց առաջ տեղեկացնում է հաջորդող հարցի մասին.

դ) հարցի քննարկումը սկսվելուց առաջ տեղեկացնում է հարցի քննարկման կարգի և տևողության մասին.

ե) հայտարարում է ելույթների և հարցերի համար հերթագրումը, քվեարկության անցկացումը.

զ) ձայն է տալիս ելույթի, ինչպես նաև հարցի կամ դրան պատասխանելու համար.

է) հանում է այն հարցերը կամ դադարեցնում է այն ելույթները, որոնք չեն առնչվում կամ վերաբերելի չեն քննարկվող հարցին.

ը) նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով կարող է ընդմիջել ելույթները.

թ) համակարգում է նիստը սպասարկող ծառայողների աշխատանքը.

ժ) հայտարարում է նիստի ավարտի մասին.

ժա) ստորագրում է Ժողովի արձանագրությունը, որոշումները.

ժբ) իրականացնում է նիստի բնականոն ընթացքն ապահովելուն ուղղված այլ գործողություններ:

Դատավորների իրավունքներն ու պարտականությունները

23. Դատավորներն իրավունք ունեն՝

1) ծանոթանալ նիստի Օրակարգին և նրանում ընդգրկված հարցերի վերաբերյալ նյութերին.

2) ելույթ ունենալ նիստում քննարկվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ, հարցեր տալ, ներկայացնել առաջարկություններ և առարկություններ.

3) իրականացնել օրենքով և սույն կարգով նախատեսված այլ լիազորություններ:

24. Դատավորները պարտավոր են՝

- 1) մասնակցել Ժողովում ցանկացած հարցի քննարկմանը և որոշման կայացմանը.
- 2) կատարել Ժողովը վարողի օրինական կարգադրությունները.
- 3) Ժողովի Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման ժամանակ լինել անաչառ և օբյեկտիվ.
- 4) պահպանել իր լիազորությունների իրականացման շրջանակներում իրեն հայտնի դարձած հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության գաղտնիությունը.
- 5) իրականացնել օրենքով և սույն կարգով նախատեսված այլ պարտականություններ:

Ժողովին ներկա անձանց կարգավիճակը

25. Ժողովին ներկա անձինք պարտավոր են՝
- 1) կատարել Ժողովը վարողի օրինական պահանջները.
 - 2) չխոչընդոտել նիստի բնականոն ընթացքը.
 - 3) անջատել բջջային հեռախոսները և տեխնիկական այլ միջոցները, որոնք կարող են խոչընդոտել նիստի բնականոն ընթացքը:

Ժողովի նիստերի անցկացումը

26. Ժողովը վարողը նշանակված ժամին հավաստիանալով, որ նիստն իրավագոր է, բացում է այն և քվեարկության է դնում Օրակարգը:

27. Օրակարգը քննարկվում և հաստատվում է բաց քվեարկությամբ՝ քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ՝ հետևյալ կարգով.

- 1) Ժողովը վարողը դատավորների կարծիքն է հարցնում Օրակարգի վերաբերյալ.
- 2) Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առարկությունների դեպքում դրանք դրվում են քվեարկության.
- 3) եթե կան լրացուցիչ հարցեր, ապա Ժողովը վարողն ընթացիկ քվեարկության է դնում Օրակարգում լրացուցիչ հարց ընդգրկելու յուրաքանչյուր առաջարկություն.
- 4) Ժողովը վարողը, ելնելով աշխատանքի արդյունավետությունից, կարող է քննարկման դնել Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման հաջորդականությունը.
- 5) Ժողովը վարողը վերջնական քվեարկության է դնում Օրակարգը՝ հավանության արժանացած փոփոխություններով:

28. Մինչև Օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի:

29. Ժողովում հարցերի քննարկումը կատարվում է հետևյալ ընթացակարգով.

- 1) գեկուցում.

2) հարցեր գեկուցողին, նրա պատասխանները, հարց տվողի և գեկուցողի արձագանքները.

3) ելույթներ.

3) մտքերի փոխանակում.

4) քվեարկություն:

30. Հարցեր տալու կամ ելույթ ունենալու ցանկություն ունեցող անձինք դիմում են Ժողովը վարողին: Հարցերը տրվում են, ինչպես նաև ելույթ ունեցողները հանդես են գալիս ըստ դիմելու հաջորդականության, Ժողովը վարողի հայտարարությամբ, որով հիշեցվում է հաջորդ հարց տվողի կամ ելույթ ունեցողի անուն-ազգանունը:

31. Ժողովը վարողը հանում է հարցին չառնչվող կամ կրկնվող հարցերը:

32. Հարցի քննարկման ընթացքում՝

1) գեկուցման համար հատկացվում է մինչև 15 րոպե.

2) հարցերի, դրանց պատասխանելու, ինչպես նաև արձագանքելու համար հատկացվում է մինչև 5 րոպե.

3) ելույթների համար հատկացվում է մինչև 10 րոպե:

33. Նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն:

34. Նիստի տեսանկարահանումը և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում է Ժողովի որոշմամբ:

35. Հարցերին պատասխանելուց հետո գեկուցումն ավարտվում է, որից հետո, եթե ելույթներ չկան, Ժողովը վարողը հրավիրում է մտքերի փոխանակման:

Մտքերի փոխանակումն իրականացվում է նիստում քննարկվող հարցի վերաբերյալ առաջարկություններ և (կամ) առարկություններ հնչեցնելու միջոցով:

Մտքերի փոխանակման ժամանակ մասնակիցներին իրենց առաջարկությունը և (կամ) առարկությունը հնչեցնելու համար տրվում է մինչև 10 րոպե ժամանակ:

Ժողովը վարողը կարող է պարզել դատավորների դիրքորոշումը հնչեցված առաջարկության և առարկության վերաբերյալ:

36. Քննարկման արդյունքում քվեարկվում է Ժողովի որոշումը՝ ներկայացված առաջարկությունների և առարկությունների համաձայն:

Ժողովի նիստի հետաձգումը և ընդմիջումները

37. Ժողովի՝ յուրաքանչյուր հարցով նիստը շարունակվում է անընդհատ, բացառությամբ Ժողովի որոշմամբ ընդմիջման համար նախատեսված ժամանակի, ինչպես նաև նիստը հետաձգվելու դեպքի:

38. Ժողովի նիստն անհրաժեշտության դեպքում կարող է ընդմիջվել նաև Ժողովին մասնակցող դատավորի առաջարկությամբ՝ Ժողովի որոշմամբ:

Ընդունված որոշման հիման վրա ընդմիջումը հայտարարում է Ժողովը վարողը:

39. Ժողովի նիստը հետաձգվում է՝

1) հարցի վերաբերյալ նյութերը դատավորներին սույն կարգով սահմանված ժամկետից ուշ տրամադրելու դեպքում, եթե դատավորը պնդում է այդ մասին.

2) հարցի քննությունը տվյալ նիստում անհնարին դարձնող այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում:

Ժողովի կողմից որոշումներ ընդունելու կարգը

40. Ժողովում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան քվեարկությունը և դրա արդյունքում որոշում կայացնելը կատարվում է հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո:

41. Ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե այլ բան սահմանված չէ Գ-ատական օրենսգրքով:

Բաց քվեարկությունն իրականացվում է ձեռք բարձրացնելու միջոցով: Բաց քվեարկության ընթացքում ձայները հաշվում է Ժողովը վարողը:

Բաց քվեարկության արդյունքներն արտացոլվում են Ժողովի նիստի արձանագրության մեջ:

42. Ժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում Ժողովում հրապարակվելու պահից, եթե այլ բան սահմանված չէ Ժողովի որոշմամբ:

43. Ժողովի կողմից հավանության արժանացած որոշման նախագծի տեքստը խմբագրվում է Գ-եպարտամենտի կողմից: Ժողովի որոշումը ձևակերպվում է առանձին ակտի ձևով՝ բացառությամբ արձանագրային որոշումների (դրանք են՝ Ժողովի գործունեության կազմակերպչական հարցերի վերաբերյալ որոշումները, որոնք առանձին ակտի ձևով չեն ընդունվում և արտացոլվում են արձանագրության մեջ):

Առանձին ակտի ձևով կազմված որոշումը ստորագրում է Ժողովը վարողը, և այն կնքվում է Ժողովի կնիքով:

44. Ժողովի առանձին ակտի ձևով կազմված որոշումները ենթակա են հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում:

45. Ժողովում ընդունված բնօրինակ որոշումները, արձանագրությունը և այլ նյութերը պահվում են Գ-եպարտամենտում:

Ժողովում ընտրությունների կազմակերպման կարգը

46. Ժողովի կողմից ընտրություններն իրականացվում են գաղտնի քվեարկությամբ:

47. Գաղտնի քվեարկությունն իրականացվում է քվեաթերթիկներով:

48. Գաղտնի քվեարկությունը կազմակերպելու, քվեարկողների ձայները հաշվելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով Ժողովը բաց քվեարկությամբ՝ քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ, կազմավորում է հաշվիչ հանձնաժողով: Դատավորները կարող են առաջադրվել որպես հաշվիչ հանձնաժողովի անդամ ինքնաառաջադրման կամ այլ դատավորի կողմից առաջադրվելու եղանակով, եթե անցկացվելիք գաղտնի քվեարկությանը իրենց թեկնածությունը չի քվեարկվելու:

Հաշվիչ հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից, որոնք իրենցից ընտրում են նախագահ, որը կանոնակարգում է հանձնաժողովի աշխատանքները:

49. Գաղտնի քվեարկությամբ անցկացվող ընտրությանն առաջադրված թեկնածուները, նախքան քվեարկության սկիզբը, ունեն մինչև 10 րոպե ելույթի իրավունք:

Գաղտնի քվեարկություն կազմակերպելու համար Ժողովը վարողը հայտարարում է ընդմիջում:

50. Հաշվիչ հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնելու արդյունքում կազմում է արձանագրություն, որը ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները: Մեծամասնության կարծիքի հետ չհամաձայնող հաշվիչ հանձնաժողովի անդամն իրավունք ունի չստորագրելու արձանագրությունը, սակայն այդ դեպքում պարտավոր է գրավոր շարադրել իր հատուկ կարծիքը, որը կցվում է արձանագրությանը:

Արձանագրության մեջ, ի թիվս այլնի, ըստ առանձին քվեաթերթիկների, նշվում են.

1) քվեաթերթիկների ընդհանուր թիվը.

2) քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը.

3) չօգտագործված քվեաթերթիկների թիվը.

4) անվավեր քվեաթերթիկների թիվը.

5) յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը՝ ըստ ձայների նվազման հաջորդականության:

51. Ընտրության արդյունքներն ամփոփելուց հետո՝ ստորագրված արձանագրությունը (առկայության դեպքում նաև քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին արձանագրությունը/ները/) քվեաթերթիկների հետ դրվում են ծրարի մեջ, փակվում և հանձնվում Դեպարտամենտին՝ պահպանության համար: Փակ ծրարի վրա ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահը և/կամ այլ անդամները: Քվեաթերթիկները պահպանվում են 1 տարի ժամկետով:

Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի ընտրությունը

52. Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների ընտրության կարգի մանրամասները սահմանված են Դատական օրենսգրքով:

53. Քվեարկությունն անցկացվում է առանձին քվեաթերթիկներով՝ ըստ Դատական օրենսգրքում նշված դատական ատյանների՝ քվեաթերթիկում նշելով համապատասխան ատյանի դատարանի անվանումը:

Նախքան քվեարկության սկիզբը համապատասխան դատական ատյանի քվեաթերթիկները (դարձերեսի մասում) կարող են ստորագրվել տվյալ դատական ատյանից առաջադրված թեկնածուների կողմից:

54. Քվեաթերթիկի ձախ կողմում այբբենական հերթականությամբ նշվում են համապատասխան դատարանից թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը, իսկ աջ կողմում՝ «կողմ» բառը՝ ներքևում նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունով:

Ընտրողը նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի դատարկ քառանկյունում, որին կողմ է քվեարկում:

Նշումը կատարվում է միայն V ձևի նշանով:

55. Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում քվեաթերթիկի ձախ կողմում նշվում է թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, իսկ աջ կողմում՝ «կողմ» և «դեմ» բառերը՝ յուրաքանչյուրի ներքևում՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունով:

Քվեարկողը, եթե կողմ է քվեարկելու, նշում է կատարում «կողմ» բառերի, եթե դեմ՝ «դեմ» բառերի ներքևի դատարկ քառանկյունում:

Նշումը կատարվում է միայն V ձևի նշանով:

56. Քվեաթերթիկը պետք է ներառի համապատասխան թեկնածուների մասնագիտացումների մասին նշում, ինչպես նաև ծանուցում քվեարկողի ունեցած ձայների քանակի վերաբերյալ:

57. Քվեաթերթիկը լրացվում է գաղտնի: Լրացված քվեաթերթիկը քվեարկողի կողմից դրվում է համապատասխան դատական ատյանի քվեաթերթիկների համար նախատեսված քվեատուփում:

58. Քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

- 1) քվեարկողն ավելի ձայն է տվել, քան սահմանված է սույն կարգով.
- 2) քվեաթերթիկում նշումը կատարվել է ոչ սահմանված ձևի նշանով.
- 3) չի պարունակում որևէ նշում.
- 4) պարունակում է քվեարկողի ինքնությունը բացահայտող կամ որևէ այլ նշում:

59. Քվեարկության արդյունքներն ամփոփվելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները:

60. Զվեարկության արդյունքները հրապարակվելուց անմիջապես հետո թեկնածուները կարող են ծանոթանալ քվեարկության արդյունքների վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի արձանագրությանը և ինքնուրույն կատարել քաղվածքներ:

61. Այն դեպքում, երբ քվեարկության արդյունքների արձանագրության ուսումնասիրմամբ թեկնածուի մոտ ծագել են արդյունքների սխալ ամփոփման վերաբերյալ կասկածներ, ապա վերջինս իրավունք ունի բողոքարկելու այն քվեարկության արդյունքները, որտեղ քվեարկվել է իր թեկնածությունը՝ հաշվիչ հանձնաժողովին ներկայացնելով իր ներկայությամբ քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) պահանջ՝ հիմնավոր փաստարկներով:

62. Վերահաշվարկ կատարվում է այն դեպքում, երբ հաշվիչ հանձնաժողովի կարծիքով վերահաշվարկ պահանջող թեկնածուի կողմից ներկայացված են համապատասխան քվեարկության արդյունքների սխալ ամփոփման հիմնավոր փաստարկներ:

Այն դեպքում, երբ պահանջվել է վերահաշվարկի իրականացում սույն կարգի դրույթների խախտմամբ՝ հաշվիչ հանձնաժողովը մերժում է վերահաշվարկի պահանջը և վերահաշվարկ չի իրականացնում: Վերահաշվարկ կատարելու պահանջը մերժելու դեպքում հաշվիչ հանձնաժողովը կայացնում է պատճառաբանված որոշում:

63. Մինչև վերահաշվարկ սկսելը՝ վերահաշվարկի պահանջ ներկայացրած թեկնածուի քվեարկության արդյունքների վերահաշվարկից հրաժարվելը հիմք է վերահաշվարկ չիրականացնելու համար:

64. Վերահաշվարկին կարող են ներկա գտնվել նաև վերահաշվարկի պահանջ ներկայացրած թեկնածուի հետ քվեարկված մյուս թեկնածուները:

65. Վերահաշվարկի հիմնավոր մի քանի պահանջների առկայության դեպքում հաշվիչ հանձնաժողովն առաջին հերթին վերահաշվարկում է ավելի վաղ ներկայացված պահանջի հիմքում ընկած քվեարկության արդյունքները:

66. Վերահաշվարկի պահանջ ներկայացնողի բացակայությունը հիմք չէ վերահաշվարկ չանցկացնելու կամ այն դադարեցնելու համար:

67. Վերահաշվարկ կատարելիս քվեաթերթիկի վավերականությունը որոշվում է սույն կարգի պահանջներին համապատասխան:

68. Վերահաշվարկի ժամանակ այնտեղ գտնվելու իրավունք ունեցող թեկնածուներն իրավունք ունեն ծանոթանալու քվեարկությանը մասնակցած քվեարկողների ցուցակներին, ինքնուրույն կատարելու քաղվածքներ:

69. Հաշվիչ հանձնաժողովը կատարված վերահաշվարկի արդյունքում կազմում է արձանագրություն, որի կազմման վրա տարածվում են սույն կարգի 50-րդ մասի կարգավորումները:

Վերահաշվարկին ներկա գտնվելու իրավունք ունեցող թեկնածուների պահանջով նրանց տրամադրվում է համապատասխան քվեարկության արդյունքների վերահաշվարկի արձանագրությունը՝ ծանոթանալու և ինքնուրույն քաղվածքներ կատարելու համար:

70. Քվեարկության արդյունքները վերջնական ամփոփվելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները:

71. Ընտրության արդյունքներն ամփոփելուց հետո դրանք հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքում:

Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրությունը

72. Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրության կարգի մանրամասները սահմանված են Գատական օրենսգրքով:

73. Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրության քվեարկությունն անցկացվում է քվեաթերթիկներով: Նախքան քվեարկության սկիզբը համապատասխան քվեաթերթիկները (դարձերեսի մասում) կարող են ստորագրվել առաջադրված թեկնածուների կողմից:

74. Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուի ընտրության քվեարկության անցկացման կարգի վրա տարածվում են սույն կարգի 54-71-րդ մասերով սահմանված դրույթները՝ հաշվի առնելով այս ընտրության համար Գատական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունները:

Կարգապահական, Ուսումնական հարցերի հանձնաժողովների անդամների ընտրությունը

75. Կարգապահական հարցերի հանձնաժողովի, ինչպես նաև Ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամների ընտրության կարգի մանրամասները սահմանված են Գատական օրենսգրքով:

76. Կարգապահական հարցերի հանձնաժողովի, ինչպես նաև Ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամների ընտրության քվեարկության անցկացման կարգի վրա տարածվում են սույն կարգի 53-71-րդ մասերով սահմանված դրույթները:

Աշխատանքային խմբերի ձևավորում

77. Իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար Ժողովը կարող է ձևավորել աշխատանքային խմբեր:

78. Ժողովը բաց քվեարկությամբ՝ քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ, դատավորներից ընտրում է աշխատանքային խմբի

անդամներ: Գատավորները կարող են առաջադրվել որպես աշխատանքային խմբի անդամ ինքնաառաջադրման կամ այլ դատավորի կողմից առաջադրվելու եղանակով:

79. Աշխատանքային խմբի անդամների քանակը և դրա գործունեության ժամկետը, անհրաժեշտության դեպքում՝ նաև կարգը, սահմանվում է Ժողովի՝ աշխատանքային խումբ ձևավորելու մասին որոշմամբ:

Ժողովի արձանագրությունը

80. Ժողովի ընթացքն արձանագրվում է: Արձանագրությունը վարում է Ժողովի կողմից բաց քվեարկությամբ՝ քվեարկությանը մասնակցող դատավորների ձայների պարզ մեծամասնությամբ, որոշված դատավորը (քարտուղարը): Ժողովի արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում, որը ստորագրում են Ժողովը վարողը և քարտուղարը:

81. Արձանագրությունում նշվում են՝ Ժողովի հրավիրման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, վայրը, Ժողովը վարողը, արձանագրողը, օրակարգը, քվեարկության դրված հարցերը, զեկուցողը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, Ժողովի ընդունած որոշումները, Ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները:

Ժողովի ընթացքը կարող է ձայնագրվել: Ձայնագրվելու դեպքում այն պահպանվում է լազերային կրիչի վրա:

82. Գատավորներն իրավունք ունեն ծանոթանալ Ժողովի արձանագրությանը: Նրանք իրավունք ունեն դիտողություններ ներկայացնելու թղթային արձանագրությունը կազմելու լրիվության կամ ճշտության վերաբերյալ:

83. Արձանագրության վերաբերյալ դիտողություններն ուսումնասիրում է Ժողովը վարողը՝ դրանք ներկայացնելու պահից երեք օրվա ընթացքում:

84. Արձանագրության վերաբերյալ դիտողություններն ընդունելու կամ մերժելու մասին Ժողովը վարողը կայացնում է որոշում: Արձանագրության վերաբերյալ ներկայացված դիտողությունները ևս պահպանվում են:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
դատավորների ընդհանուր ժողովի
2018թ. մայիսի 18-ի թիվ 02L որոշման

Ձև 1
Մի քանի թեկնածուների քվեարկվելու դեպքում քվեաթերթիկ

Քվեաթերթիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
(նշվում է ընտրության անվանումը) ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանուցում՝ քվեարկողի ունեցած
ձայների քանակի վերաբերյալ

Հ/հ	Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, դատարանի անվանումը, դատավորի մասնագիտացումը	Կողմ
1.	Նշվում է թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, դատարանի անվանումը, դատավորի մասնագիտացումը	Նշումի համար
2.	Նշվում է թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, դատարանի անվանումը, դատավորի մասնագիտացումը	Նշումի համար
3.	Նշվում է թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, դատարանի անվանումը, դատավորի մասնագիտացումը	Նշումի համար

Մեկ թեկնածուի քվեարկվելու դեպքում քվեաթերթիկ

Քվեաթերթիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
(նշվում է ընտրության անվանումը) ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ծանուցում՝ քվեարկողի ունեցած
ձայների քանակի վերաբերյալ

Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, դատարանի անվանումը, դատավորի մասնագիտացումը	Կողմ	Դեմ